

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀՐԳ ԵՐԻՏԱՍԵՐԴՈՒԹԻՒՆԸ

(նամակ Մոսկուայից)

Մեր այժմուաւ երիտասարդութիւնը, ընդհանրապէս առած, իսպառ մի կողմն է քաջուած հասարակական մի որ և է գործունէութիւնից, մենք չունենք երիտասարդութիւն՝ լցուած ինքնաճանաչութեան զգացմունքով,—դա փաստ է և ցաւալի՜ իրականութիւն (բացառութիւնները միշտ լարգում ենք)։ Բայց մասնաւորեմ խօսքս Մոսկուայի հալ երիտասարդութեան վրայ։

Մոսկուայի հալ երիտասարդութիւնը կարելի է բաժանել երեք մասի՝ ալն է—ա). ուսանողական, բ). ծառայող (գործակաւորներից բաղկացած) և գ). վաճառականական (բուռօտաւաղիայից)։ Խօսենք ամեն-մինի մասին առանձին-առանձին և տեսնենք թէ ինչ չափով նրանք օգտակար են հանդիսանում հասարակութեան համար։

Ա). Ուսանողական երիտասարդութիւնը, որը միշտ ծամանակաւոր է Մոսկուայում, բաղկացած է մեծամասնութեամբ կովկասից և մասամբ Ռուսաստանի ալլնալ քաղաքներից եկած երիտասարդներից. սա ունի իւր որոշ՝ կարելի է ասել, սեպհական գործունէութիւնը, որը կազմում է ռուսանողական ընկերութիւնը։ Այդ ընկերութիւնը պարբերաբար ժողովներ է կազմում, ընտրում է իւր միջից առանձին մասնախումբ, որի պարտականութիւնն է միջոցներ գտնել նիւթապէս օգնելու իւր չքաւոր «կօլէգիան»երին։ Այդ նպատակով ուսումնական տարուալ ընթացքում, մասնախումբը կազմում է մի քանի երեկոյթներ՝ «հալկական» կոչուած, որոնք ի դէպս պէտք է ասել շատ լաջող են դուրս գալիս և որոնցով Մոսկուայի բնակչութեան (առանց ազգի խտրութեան) բարձր՝ ախպէս կոչուած արիստոկրատ դասակարգը շատ հետաքրքրւում է. այդ երեկոյթներից գոյացած արդիւնքը կազմում է գլխաւորապէս չքաւոր ուսանողներին օգնելու մալր դումարը։ Հարկաւոր դէպքերում մասնախումբը իւր անդամներին միջոցով աշխատում է ձեռք բերել և մասնաւոր նպաստներ ևս, տեղւոյս հասարակութեան հարուստ անդամներից։ Այս է հաւառ-

սանդղական երիտասարդութեան ամբողջ գործունէութիւնը և աւելին պահանջելը, մեր կարծիքով անկարելի է, որովհետև ուսանողութիւնը լինելով չքաւոր ծնողների զաւակներ, ոչ մի հնարաւորութիւն չունի իւր ազատ ժամերը զոհելու մի որ և է հասարակական գործունէութեան, լինի դա գրական, կամ մի ալլ ասպարիզի վերայ: Ուրիշ խնդիր է, ի հարկէ, այն հանգամանքը, որ մեր պիժմուշ ուսանողութիւնը, ամենաչնչին բացառութեամբ, վերջացնելով իւր ընտրած մասնագիտութիւնը, վերադառնում է իւր ծննդավայրը և դիպլոմի ոլժով մտնելով հասարակական որ և է պաշտօնի մէջ, մնում է այն՝ ինչ որ էր առաջ և միակ նպատակ է ունենում որքան կարելի է շուտով հարստանալ. իսկ հասարակական գործունէութիւն, գրականութիւն և ալլ սրանց նման ազգային հանրօգուտ գործեր նորա համար դուրսութիւն չունեն:

Բ). Ծ ա ա լ ո ղ և առհասարակ ստորագրեալ գործակատար տարրը Մոսկուայում, պէտք է ասել, բաւականին շատ է, բայց սրանց մեծամասնութիւնը ծառայութեան պաշտօնով զբաղուած է այն աստիճան, որ ոչ ազատ ժամ ունի հետաքրքրութեամբ և զբաղուելու որ և է հասարակական խնդրով և ոչ էլ նիւթայէս այն աստիճան ապահով, որ միջոց ունենալ ցոյց տալ ինքնուրոյն օգտակար գործունէութիւն: Այդպիսի բան նրանցից պահանջելը անխղճութիւն կը լինէր մեր կողմից. ընդհակառակն, ի նկատի առնելով այդ դասակարգի երիտասարդութեան բաւականին մեծ թիւը և առանձին այն հանգամանքը, որ սրանց մեծամասնութիւնը լինելով միջակ կրթութեան տէր անձինք, թերուսներ են և մասամբ էլ բոլորովին անկիրթ, ցանկալի էր որ ուշադրութիւն դարձուէր սրանց վիճակի, կեանքի պայմանների թեթեւեղութեամբ վրայ այն մարդկանց կողմից, որոնք կարող են և պէտք է որ գործ դնեն ամեն միջոց և աշխատեն բարձրացնել նրանց բարոյապէս այն աստիճանին, որ կարող լինի հասարակութեան համար օգտակար անդամ, նպաստաւոր ոլժ կազմել: Եւ այսպէս, այդ տարրը, ալիսնքն ծառայող (գործակատար) երիտասարդութիւնը, գրեթե չունելով կեանքի որոշ և բաւարար, բարոյապէս բարձր աստիճանի վրայ, որքան իւր ոլժերը ներեն կարող է օժանդակել ընդհանուր գործին, միանալով այն խումբին կամ ընկերութեանը, որը արդէն հաստատուած է և գործում է: Անշուշտ նրանց բարոյականը բարձրացնելը մի շատ ցանկալի և պատուական գործ է, որում մեծ աջակցութիւն կարող են ցոյց տալ այն պ. պ. վաճառականները, որոնց մօտ ծառայում են այդ գործակատարները:

Գ). Վ ա ճ ա ա կ ա ն ա կ ա ն կ ա մ չ բ ու լ ժ ու ա ն երիտասարդութիւնը, լինելով բոլորովին հարուստ և ապահով կեանքի պայմանների մէջ, կարծում էինք որ ամենից աւելի պիտի հետաքրքրուէր հասարակական հարցերով. բայց ինչ ենք տեսնում իրականութեան մէջ,—այդ երիտասարդ «բուռնուա-

ները» նոր աւարտած իրանց կրթութիւնը վաճառականական բարձր ճեմարանում, մտնում են վաճառականութեան Ուկրաինի մէջ և սիրուն մամոնալի հոտն առնելով, իսկոյն կուրանում և ստրկանում պատկառելի մետաքսին ալն աստիճան, որ իրանց անձնական շահերից դէն ոչ մի տեղ և ոչ մի սուրբ գործ չեն տեսնում. սրանցից ամեն-մէկը իրան մէկ մէկ Ռոդչիլդ է կարծում. Նա բոլորովին գաղափար անդամ չունի թէ ինչ է հասարակական կեանք, ընդհանուր շահ և նորա ականջին խորթ են ազգ, եկեղեցի և այլ սրանց նման բառեր... ձիշտ է, նա համարեմ ամեն կիւրակէ օր եկեղեցի է գալիս և արտաքուստ նորա վերալ նախելով, դուք կը կարծէք թէ ինչ աստիճան նա ջերմեռանդ է իւր եկեղեցուն, իւր կրօնին... Բայց այդ միմիայն արտաքուստ և ուշի ուշով նրան հետեողը պարզ կը տեսնէ, որ նորա եկեղեցի գալում երևում է, որ նա ցոյց է տալիս իւր ռետինէ անիւնների դղրդոցը, իւր փայլուն շքիւնդը» և արտաքին ալն ամեն «չիքը» որ լատուկ է «բուռ-ժուպի» և ս ին...

Ինչ կարելի է սպասել այսպիսի երիտասարդութիւնից (իսոքս չնչին բացառութիւնների մասին չէ), կարծող է նա օգտակար անդամ լինել հասարակութեան համար, կարող է նա նախանձախնդիր լինել հասարակական ընդհանուր շահի. —կը պատասխանենք՝ ոչինչ, ոչ և ոչ: Այսպիսի երիտասարդութիւնը բոլորովին անօգուտ է հասարակութեան համար, նա ընդունակ չէ ոչ մի ռէալ գործունէութիւն ցոյց տալ հասարակութեան համար, նա իսպառ զուրկ է ինքնաճանաչութիւնից, գիտակցութեան վեհ զգացմունքից և կազմով է մի սառած՝ անգոյն երիտասարդութիւն, մի անշարժ և հանգած տարր: Նիւթէ ալս ամենի վերալ աւելացնենք և ալն ցաւալի երևութիւն, որ մեր վաճառականն երիտասարդութիւնը բռնունակ է իր թախաղի վարակիչ ախտով, —ալն ժամանակ պատկերը լրացած կը լինի և նորա գոյնը աւելի պարզ և որոշ: Տեսնելով այս դասակարգի երիտասարդութեան աննպատակ կեանքը, նրանց ալդ աստիճան ինքնաճանաչութիւնից ջորիկ լինելը, նորա զուրկ լինելը ալն հասարակ տարրական հասկացողութիւնից, որ ինչպէս հասարակութեան անդամ, ունի որոշ պարտականութիւններ կատարելու դէպի վերջինս: Ասում եմ տեսնելով այս ամենը, մարդ վերին աստիճանի ցաւում է, որովհետև նորա ձեռքումն է ուժը. նիւթական միջոցը և ժամանակ ու հնարաւորութիւն ունի գործածելու այդ յօգուտ հասարակութեան: Բաւական է միայն ունենալ բարի ցանկութիւն և աննկուն պատուաբեր կամք կատարելու ալն ինչ որ կարելի է, ձեռնարկել ալնպիսի գործերի, որոնք վաղուց հարկաւոր էր, որ դուրսիւն ունենալին: Մեր հասարակութեան համար հարկաւոր է հասարակական ընթերցարան, մենք չունենք գրական ասէր ընկերութիւն, հալ բեմական գործը սիրողների ընկերութիւն, մենք չունինք մի

հասարակական ակումբ որտեղ կարելի լինէր ամուսնայ մէջ մի-
ջանի անգամ տեսակցել միմեանց հետ, խօսել և խորհել ընդ-
հանուր գործերի մասին և այլն: Ահա սրանք են մեր հասա-
րակութեան պէտք գործերը, սրանք պէտք է լինեն մեր «բուռ-
ժուա» երիտասարդութեան հետաքրքրող հարցերը, սրանց մէջ
պէտք է տեսնէ նա իւր կատարելիք պարտքերի մի որոշ մասը,
եթէ ոչ—մենք իրաւունք կունենանք մեղադրել նորան իւր
անտարբերութեան մէջ, մենք իրաւունք կունենանք ասելու,
որ նա հասարակութեան համար բոլորովին գոյութիւն չունի:
Ինչպէս տեսնում ենք, ամեն-ինչ կախուած է «վաճառական»
երիտասարդութիւնից, նորա ձեռքումն են և նիւթական մի-
ջոցները և ժամանակը և այն բոլոր հնարաւորութիւնները,
որ տալիս են նորան իւր կեանքի անկախ և ապահով պայման-
ները: Թո՛ղ ուրեմն այդ երիտասարդութիւնը սթափուի քնից և
պարտաճանաչ գլխակցութեամբ սկսէ գործել լօգուտ հասա-
րակութեան և այն ժամանակ, մենք հաւատացած ենք, որ
Մոսկուայի հասարակութեան ամեն-մի անդամ կը խրախուսէ
նորան և կը միանալ նորա հետ ցոլց տալով իւր գործնական
աջակցութիւնը: Ափսո՛ս է այն ժամանակը, որ իզուր և ան-
գործ է անցնում և չպէտք է մոռանալ այն վաճառականա-
կան դէվիզը, որ ասում է՝ թէ «ժամանակը ոսկի է»:

ՂՈՒԿԱՍ ԳԷՄԵՁԷՃԵԱՆ